«Սպորտային տուրիզմ» մագիստրոսական ծրագիր

«Սպորտային տուրիզմ» կրթական ծրագրի նպատակն է պատրաստել զբոսաշրջության ոլորտի բարձրորակ, տնտեսության զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետներ: Կրթական ծրագրի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի մագիստրոսին համագործակցել միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ, իրականացնել զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր, աջակցել միջազգային զբոսաշրջային շուկայի համար Հայաստանի հասանելիության բարձրացմանը, համայնքներում սպորտային զբոսաշրջության զարգացմանը, տեղական մշակութային ավանդույթների վերականգնմանը:

Տվյալ կրթական ուղղությունը հնարավորություն է տալիս զբոսաշրջության ոլորտում իրականացնել ուսումնադաստիարակչական, խորհրդատվական, գիտամեթոդական, ղեկավարման, կազմակերպչական գործառույթներ: Տվյալ մասնագետը կարող է աշխատել մանկապատանեկան զբոսաշրջային կենտրոններում, սպորտային տուրիզմի ֆեդերացիայում, զբոսաշրջային ընկերություններում, բուհերի համապատասխան ամբիոններում: